Եվրոպայի Խորհուրդ

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ)

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

CPT/Inf(2020)13

# Հայտարարություն ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի սկզբունքների վերաբերյալ Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համատեքստում

Մարտի 20, 2020 թվական

*(Ոչ պաշտոնական թարգմանություն)*

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակն անսովոր մարտահրավերներ է ստեղծել Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար: Դա առանձնահատուկ և մեծ մարտահրավերներ է ստեղծել ազատությունից զրկման տարբեր վայրերի աշխատակիցների համար, այդ թվում՝ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերում, քրեակատարողական հիմնարկներում, իմիգրացիոն կալանքի վայրերում, հոգեբուժական հաստատություններում և սոցիալական խնամք իրականացնող հաստատություններում, ինչպես նաև այն նորաստեղծ հաստատություններում որտեղ անձինք գտնվում են կարանտինի մեջ: Նկատի ունենալով COVID-19-ի հետագա տարածման դեմ պայքարի համար անհրաժեշտ գործողությունների ակնհայտ հրամայականը՝ ԽԿԿ-ն անհրաժեշտ է համարում հիշեցնել խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքի մասին: Կանխարգելիչ միջոցները չպետք է հանգեցնեն ազատությունից զրկված անձանց նկատմամբ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: ԽԿԿ-ի տեսակետով հետևյալ սկզբունքները պետք է կիրառվեն բոլոր մարմինների կողմից, որոնք պատասխանատու են Եվրոպայի խորհրդի տարածքում գտնվող ազատությունից զրկված անձանց համար:

1) Հիմնական սկզբունքը պետք է լինի հնարավոր բոլոր գործողությունների իրականացումը, որպեսզի պահպանվի ազատությունից զրկված բոլոր անձանց առողջությունն ու անվտանգությունը: Նման գործողություններ ձեռնարկելը նպաստում է նաև աշխատակիցների առողջության և անվտանգության պահպանմանը:

2) Ազատությունից զրկման բոլոր վայրերում պետք է հարգել և լիարժեք կիրառել պանդեմիայի դեմ պայքարի վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցները, ինչպես նաև միջազգային չափանիշերին համապատասխանող ազգային առողջապահական և կլինիկական ուղեցույցները:

3) Անհրաժեշտ է ավելացնել հաստատությունների աշխատակազմը: Աշխատակազմը պետք է ստանա անհրաժեշտ մասնագիտական աջակցություն, առողջության և անվտանգության պաշտպանություն, ինչպես նաև անհրաժեշտ վերապատրաստում՝ ազատությունից զրկման վայրերում իր լիազորությունների հետագա իրականացման համար:

4) COVID-19-ի տարածումը կանխելու նպատակով ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակող միջոց պետք է ունենա իրավական հիմք, լինի անհրաժեշտ, համաչափ, հիմնված լինի մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի վրա և կիրառվի սահմանափակ ժամկետով: Ազատությունից զրկված անձինք պետք է ստանան համապարփակ տեղեկություն ցանկացած նման միջոցառման վերաբերյալ՝ իրենց հասկանալի լեզվով:

5) Հաշվի առնելով, որ անձնական շփումները խթանում են հիվանդության տարածումը՝ բոլոր համապատասխան մարմինների կողմից պետք է ջանքեր գործադրվեն՝ կիրառելու ազատությունից զրկման այլընտրանքային միջոցներ: Այս մոտեցումը պարտադիր է հատկապես գերբնակեցման պայմաններում: Ավելին, պետական մարմինները պետք է առավել շատ կիրառեն ազատությունից զրկման այլընտրանքային միջոցները, այդ թվում՝ պատժի ժամանակահատվածի կրճատում, պատժից վաղաժամկետ ազատում և փորձաշրջանի կիրառում: Պետք է վերանայել հոգեբուժական հաստատություններում անձանց հարկադիր բուժումը շարունակելու անհրաժեշտությունը, սոցիալական խնամքի կենտրոններում գտնվող անձանց հնարավորության դեպքում դուրս գրել կամ տեղափոխել համայնքային խնամքի, ինչպես նաև հնարավորության սահմաններում զերծ մնալ ներգաղթած անձանց (միգրանտներին) ազատությունից զրկելուց:

6) Առողջության ապահովման հետ կապված՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ազատությունից զրկված անձանց առանձնահատուկ կարիքներին, հատկապես՝ խոցելի խմբերին և/կամ ռիսկային խմբերին՝ ծերերին և նախկինում հիվանդություններ ձեռք բերած անձանց: Դա ներառում է նաև COVID-19-ի առկայությունը ստուգելու համար սքրինինգային հետազոտությունների իրականացումը և անհրաժեշտության դեպքում ինտենսիվ խնամքի ապահովումը: Բացի այդ, ազատությունից զրկված անձինք այս ընթացքում պետք է ստանան լրացուցիչ հոգեբանական աջակցություն:

7) Թեև ոչ կենսական նշանակություն ունեցող գործունեության կասեցումը իրավաչափ և ողջամիտ է, պանդեմիայի ժամանակ ազատությունից զրկված անձանց հիմնարար իրավունքները պետք է լիարժեք ապահովվեն: Սա հատկապես ներառում է անձնական պատշաճ հիգիենայի պահպանումը (ներառյալ տաք ջրի և օճառի հասանելիությունը) և բացօթյա ամենօրյա զբոսանքի հասանելիությունը (առնվազն մեկ ժամ տևողությամբ): Ավելին, արտաքին աշխարհի հետ կապի բոլոր սահմանափակումները, այդ թվում այցելությունները, պետք է հավասարակշռվեն կապի այլընտրանքային միջոցների (հեռախոսակապի կամ ինտերնետային կապի միջոցով ձայնային կապի) հասանելիության ավելացմամբ:

8) SARS-CoV-2-ով վարակված լինելու կամ դրա կասկածի պարագայում ազատությունից զրկված անձի մեկուսացման կամ կարանտինի դեպքում տվյալ անձը պետք է ունենա ամենօրյա բավարար մարդկային շփում:

9) Ցանկացած դեպքում և բոլոր ժամանակներում պետք է լիարժեք ապահովվեն իրավապահ մարմինների կողմից անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքները (փաստաբանի և բժշկի հասանելիություն, ազատությունից զրկված լինելու վերաբերյալ տեղեկացնելու իրավունք): Որոշ հանգամանքներում կանխարգելիչ միջոցները (օրինակ՝ պաշտպանիչ դիմակներ կրելու պահանջ ախտանիշներ ունեցող անձանց) կարող են արդարացված լինել:

10) Անկախ մարմինների՝ ներառյալ կանխարգելման ազգային մեխանիզմների և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից իրականացվող մշտադիտարկումը շարունակում է վատ վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիք հանդիսանալ: Պետությունները պետք է երաշխավորեն մշտադիտարկում իրականացնող մարմինների մուտքը ազատազրկման բոլոր վայրեր, այդ թվում՝ կարանտինում գտնվող անձանց համար նախատեսված վայրեր: Միաժամանակ, մշտադիտարկում իրականացնող բոլոր մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր նախազգուշական միջոցները պահպանելու համար «չվնասելու» սկզբունքը՝ հատկապես տարեցների և նախկինում ձեռք բերած հիվանդություններ ունեցող անձանց պարագայում: